Սիզավետ

Վարչական պատասխանատու՝ Պողոսյան Հենրիկ

Հեռ 099-67-70-82

Մակերես՝ 25.6կմ^2

Բնակչություն՝ 378

sizavet.shirak@mta.gov.am

Գյուղ Աշոցքի տարածաշրջանում, Աշոցքից 10-12կմ հյուսիս-արևմուտք, մարզկենտրոնից գտնվում է 44կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ծաղկաշեն, Կորաղբյուր, Ցախկաշեն, Քոռաղբյուր, Քոռբուլաղ անվանումները: Սիզավետ է վերանվանվել 1967 թ-ին: Գյուղը տեղադրված է Ջավախքի լեռնաշղթայի արևմտյան լանջին՝ ծովի մակարդակից 2070մ բարձրության վրա: Ունի ցուրտ կլիմա, սակավ տեղումներ: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են մառախուղները և ձնաբքերը: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններն են: Ունի աղբյուրներ, որոնք օգտագործվում են որպես խմելու ջուր:
Գյուղը զգալի տուժել է 1988թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:
Գյուղի բնակչության նախնիների մի մասը տեղափոխվել է Վրաստանի Նինոծմինդայի և Հայաստանի Լոռվա տարածաշրջաններից: 1873 թ-ին գյուղն ունեցել է 294, 1897 թ-ին՝ 729, 1926 թ-ին՝ 1031, 1939 թ-ին՝ 1300, 1959 թ-ին՝ 345, 1979 թ-ին՝ 303, 1989 թ-ին՝ 375 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013 թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 378 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 49%, կանայք՝ 51%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 29%, աշխատունակներ՝ 50%, հետաշխատունակներ՝ 21%: Ունի 71 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:
Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը անասնապահությունն է:Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (635հա), խոտհարքերը (468հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, խոտհարքեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 160, 148, 632 հեկտար: Զբաղվում են խոշոր եղջերավոր անասնապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Զբաղվում են նաև հացահատիկային, կերային, բանջարաբոստանային, կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Սիզավետ
Ինդեքս՝ 2802